

Wishith 3

ԱՐԴԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՏԵՇԻԿԿԱ

երրորդ
դասարանիների
մայրենիկ գիրք-պետք
երկրորդ մաս

Նկարիչ
Շամիր Շահիբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՆՈՐ ԳՈՐԾ»
հրատարակչություն
ԵՐԵՎԱՆ 1996

ԿԱԶԱՎ

Մշակումը՝ Արուսյակ Սահակյանի

Խոպոտ ձայն ունեցող ու ականջ չունեցող բռչունները չեն սիրում կարմիր կտուցով ու կարմիր տոտիկներով Կաքավին, որն օրնիբուն մաս էր զալիս արտերում ու երգում: Նախաճածից նրանց ձայնն ավելի էր խոպոտվում: Մի օր հավաքեցին ու գնացին Արծվի մոտ զանգատ.

- Թագավորն ապրա՞ծ կենա, եղ Կաքավը՝ անզործ-անբան, ամբողջ օրը երգում է, չի բողում, որ քո իրամանները լսենք:

Արծիվն էլ երգի հետ գրուս չուներ և իրամայեց.

- Կաքավին ասեք՝ բող էլ չերգի:

Կաքավը լսեց:

Արտերը սպասեցին, սպասեցին Կաքավի երգին, բայց Կաքավն էլ չէր երգում: Արտերը կարտեցին Կաքավի երգին ու խնդիրի գնացին Արծիվ թագավորին.

- Թագավորն ապրա՞ծ կենա, կարմրակտուց, կարմրատոտիկ Կաքավը կա, բայց նրա երգն էլ չկա. մեր հասկերը չեն քաղցրանա:

Արծիվն ասաց՝ բող երգի:

Բայց Կաքավն արդեն մոռացել էր իր երգի խոսքերը, միայն մեկ բառ էր հիշում.

- Կըղա՞-, կըղա՞:

Մի երկու բառ էլ արտերն էին հիշում.

Կաղ-կըղա՞-, շաղ-կըղա՞:



Փորձի՛ր բացատրել այս արտահայտությունները (դարձվածները).

ականջ չունենալ
զանգատ զնալ
երգի հետ զլուխ չունենալ
խնդիրը զնալ

Նկարագրի՛ր և նկարի՛ր Կաքավին:

Բնութագրի՛ր մյուս քոչուններին:

Ո՞ր հատվածով կհաստատես քո կարծիքը, գրի՛ր այդ հատվածը:

Գրի՛ր այն հատվածը, որտեղ խոսվում է արտերի մասին:

**ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱԻԳԱ
«ՄԱՏԵՆԻԿ»**

մայրենիկ գիրք-փեղոր
երրորդ դաստիանցիների համար
երկրորդ մաս
88 էջ, ԵԲ. 1996

© «ՆԱՐ ԳՐԱԾ»
հրատարակչություն, 1996



ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
Հայության առաջնային
գործությունները
և այլ բարեկարգությունները

ՅԱՍՏՎՎԱԾ Է

Յանաստան յանրարետության
Ելուսնակորության նախարարության
Կողմից:

Պատմի՛ր՝ ինչի՞ մասին եր երգում Կաքավը:

Ի՞նչ կլինի, եթե ոչ մի բռչուն չերգի:

Գիտե՞ս, որ...

Կաքավը զեղեցիկ, աղավնուց խոշոր բռչուն է: Նրա ոտքերը, կտուցն ու կոպերը կարմիր են, մարմինը՝ մոխրագույն: Հոճքերի շորջը սև զիծ կա, որը հասնում է մինչև ականջները: Կաքավների քաշը 350-800 գրամ է: Չվող բռչուններ են, ուշ աշնանը ոչ մեծ երամներով չվում են տաք երկրներ:

Կաքավի շատ տեսակներ կան: Հայաստանում բնակվում են քարակաքավն ու մոխրագույն կաքավը:

Քարակաքավն ապրում է ժայռոտ, քարքարոտ վայրերում: Մյուս կաքավներն իրենց բները սովորաբար հյուսում են զետնին, քարերի մեջ, քիերի տակ, լավ ծածկում են, քղարկում:

Մայիս-հունիս ամսիներին մայր (էգ) կաքավը 10-25 ձու է ածում, թուխս նստում: 23-25 օր հետո ծվից դուրս են զալիս նուրբ, շատ փոքրիկ ձագեր: 1-2 օր հետո նրանք արդեն ոտքի են կանգնում: Ծուտով այդ ձագերը ինքնուրույն են ապրում:

Կաքավները շատ չեն բռչում, կյանքի մեծ մասն անցկացնում են արտերում ու դաշտերում: Գեղեցիկ, հպարտ քայլվածք ունեն: Հայաստանում կաքավի անունով նույնիսկ տեղանուններ կան՝ Կաքավասար, Կաքավածոր, Կաքավարերդ:

ԿԱՔԱՎԻ ԵՐԳԸ

Մշակումը՝ Հ. Թումանյանի

Արև քացվեց քուս ամպերեն,
Կարավ քռավ կանաչ սարեն,
Կանաչ սարեն՝ սարի ծերեն,
Բարե քերավ ծաղիկներեն:
Սիրունի՝ կ, սիրունի՝ կ,
Սիրունի՝ կ, նախշուն կաքավիկ:
Չո քոյն հյուսած ծաղիկներով.
Շուշան, նարգիզ, նունուֆարով:
Չո տեղ լցված ցող ու շաղով,
Չնես - կելմես երգ ու տաղով:
Սիրունի՝ կ, սիրունի՝ կ,
Սիրունի՝ կ, նախշուն կաքավիկ:
Չո քե փափուկ ու խատուտիկ,
Պատիկ կտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր-կարմիր տոտիկներով
Կշորորաս ճուտիկներով:
Սիրունի՝ կ, սիրունի՝ կ,
Սիրունի՝ կ, նախշուն կաքավիկ:

- բոխ - մոգ, սկ, սկուկ
տաղ - երգ, ոտանափոր
խատուտիկ - պուտ-պուտ, պտափոր

Գրի՞ր քաց բողնված քառերը.

ա. Արև քացվեց _____ ամպերեմ,

Կաքավ քոավ _____ սարեմ:

Զոր քև փափուկ ու _____

_____ կտուց, _____ տուտիկ:

բ. Զոր տեղ լցված _____ ու _____

Հանս-կելմես _____ ու _____

Գրի՞ր և նկարի՞ր քեզ դուր եկած քառատողը:

Նկարագրի՞ր կաքավին՝ ըստ քանաստեղծության:

Նկարագրի՞ր կաքավի բույնն՝ ըստ քանաստեղծության:

Գրի՞ր քանաստեղծության ամենագեղեցիկ երկտողը:

Փորձի՛ր ինքդ գովել կաքավին:

Վարդը

Վ.Գյորե

բարգմանությունը՝ Հ.Թումանյանի

Փոքրիկ տղան մի վարդ տեսավ,
Տեսավ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսավ, ուրախացավ,
Մոտիկ վազեց սիրուն վարդին,

Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Տղան ասավ.- Քեզ կպոկեմ,
Այ կարմիր վարդ դաշտի միջին.
Վարդը ասավ.- Տե՛ս, կծակեմ,
Որ չմոռնաս փշոտ վարդին.

Փշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:

Ու անհամբեր տղան պոկեց,
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նրա ձեռքը ծակեց,
Բայց էլ չօգնեց քնքուշ վարդին.

Քնքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին:



Ծարունակի՛ր պատմել բանաստեղծությունը.

Փոքրիկ տղան դաշտում մի վարդ տեսավ ու շատ ուրախացավ:

Առաջ առաջ առաջ առաջ
Տեսավ պատմակ լուս մի խաչ
Խուսափութ հասնել բառէ
Արդախ առողի ազդակ չկաչ

Ինչպիսի՞ն է վարդը այս բանաստեղծության մեջ.

վարդ

վարդ

վարդ

վարդ

Գրի՛ր և նկարի՛ր քեզ դուր եկած հատվածը :

Ճանապարհ առաջ առաջ առաջ
Հայտն առաջ առաջ առաջ առաջ
Վայր առաջ առաջ առաջ առաջ
Մայրակ առաջ առաջ առաջ առաջ

Ամերակ գերազակ մայրակ առաջ
Եղանակ գերազակ մայրակ առաջ

Ի՞նչ գույն կրնարես ամրողջ բանաստեղծության համար. ինչո՞ւ:

Հոգին աղջկան

Վարդերն ինչո՞ւ փշեր ունեն:

the first time in 1990, and the
percentage of people aged 16-24
with no job, no education or training
rose from 10.5% in 1990 to 15.5%
in 1995. The number of young people
without work increased by 1.5 million
between 1990 and 1995.
People in the 16-24 age group
are particularly at risk of being
unemployed. In 1995, 15.5% of
young people aged 16-24 were
without work, compared with 10.5%
of all young people. This
means that nearly one in five
people in the 16-24 age group
had no job, no education or training
in 1995. The percentage of young
people without work increased
from 10.5% in 1990 to 15.5% in
1995. The number of young people
without work increased by 1.5 million
between 1990 and 1995.

ԱՊՐԵՑՈՒՐԸ

Հ.Թումանյան

Սարի լանջին, ժայռի տակ,
Չուր էր բլում սառնորակ
Ու ցրվելով խոտերում
Իզուր ճահիճ էր դառնում:
Նրա առջև մի խոր գուշ
Շինեց հովիվն ու անուշ
Խաղ ասելով նա տարավ,
Զրեց հոտը իր ծարավ:
Պախրեն անցավ էն սարից,
Ծոգից հանած չոր լեզուն,
Կուշտ-կուշտ խմեց աղբյուրից,
Ապա նայեց նա Աստծուն:
Անցվորն եկավ տոքակեզ,
Սառն աղբյուրին որ հասավ,
Գլխարկն առավ ու չորեց:
Խմեց, սիրտը հովացավ:
Ու տփավ իր օրինանքը
Անցվոր մարդը էն բարի.
«Քո շինողի օր - կյանքը
Զրի նման երկարի...»:

- | | |
|---------|--|
| պախրա | - եղախ |
| տոքակեզ | - շոգից այրված |
| գուշ | - աղբյուրի առջև դրվող տաշտ կամ սարքված հարմարանք, որի մեջ լցվում և հավաքվում է ջուրը |

Գրիք այն բառերն ու արտահայտությունները, որոնք բանաստեղծության մեջ փոխարիմում են սրանց.

շատ սառը

դուրս հոսել

տարածվել

երգել *

շոգից այրված

Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են՝ զուշը, հոտը, ջուրը, անցվորը, աղբյուրը.

Նմուշ՝ անուշ խաղ

զուշ

հոտ

ջուր

անցվոր

աղբյուր

Դուքս գրիք այն հատվածը, որտեղ խոսվում է հովկի անուշ խաղ ասելու մասին:

Բանաստեղծության ո՞ր տողը կրնարես որպես վերնագիր:

Գրիք քեզ դուր եկած բառատողը:

Դատմիք բանաստեղծությունը :

Բանաստեղծությունից դուրս գրիք օրինանքը և ուրիշ օրինանքներ գրիք:

Պատմի՞ր բանաստեղծության աղբյուրի մասին և բոլորին հրավիրի՞ր նրանից ջուր խմելու:

ԱՊՎԵՍԻ ԲԱՂՄԻՉԸ

U.Oppելյան

Ամռանը Ղափանում շոգ է լինում: Ամեն հանգստի օր բնակիչները զնում են քաղաքից դուրս՝ Խուստովի լեռան անտառուտ ու զով փեշերին հանգստանալու:

Մի անգամ Ղափանի նշանավոր որսորդ Արշակի հետ զնացինք զետի ափին ժամանակ անցկացնելու: Մեզ հետ կարք էինք վերցրել. մատղիր էինք ձուկ որսալ:

Կեսօրին մտանք զետը. ե՛ լողանում էինք, ե՛ ձուկ բռնում: Մեկ էլ Արշակը ինձ ձեռքով նշան տվեց և ջրից դուրս զալով՝ թաքնվեց քիւրի մեջ: Ես էլ դուրս եկա ջրից և կուզեկուզ մոտեցա նրան:


- Դեպի զետը մի աղվես է գալիս, ա՛յ, ա՛յ, մտավ ծառի տակ,- ասաց նա շշուկով:
- Երկի շոգից ծարավել է:
- Զէ՛, Էստեղ ուրիշ քան կա, պառկի՞ր...

Աղվեսը քայլում էր շատ զգույշ, շուտ-շուտ՝ կանգ առնում: Առջևի մի ոտքը քարձրացրած ուշադիր լսում էր, չորս կողմը նայում ու նորից շարժվում դեպի զետը:

- Զշարժվե՛ս, քող կարծի, թե մենք քնած ենք,- ականջիս շշնչաց Արշակը:

Աղվեսը հասավ զետին, նորից ուշադիր նայեց չորս կողմը, առջևի ոտները դրեց ջրի մեջ ու նորից ականջ դրեց շրջապատի ձայներին:

- Իսկ ինչո՞ւ ջուր չի խմում, Արշակ,- շշնչացի ես:
- Ինչպես երկում է, նա էլ է լողանալու եկել:
- Շատ հետաքրքրական է տեսնել նրա լողանալը:



Աղվեսը մեր խոսակցությունը չեր լսում, զետի ճայնը խանգարում էր: Վերջապես համոզվելով, որ իրեն տեսնող չկա, աղվեսը մտավ գետը, գլուխը և մարմնի առաջին մասը մտցրեց ջրի մեջ: Քիչ հետո միայն վեր ցցած դնչի ծայրն էր երկում և մեկ էլ պոչը:

- Հասկանո՞ւմ ես, բե ինչ գործի է, - շշուկով հարցրեց ինձ Արշակը:
- Ի՞նչ:
- Մարմնի վրայի միջատները, ջրին չդիմանալով, զնում, հավաքվում են պոչի վրա: Ախտահանում է իրեն...

Իսկ աղվեսը, մարմինը ջրի մեջ, պոչը՝ ջրից դուրս, կանգնել է:

Քիչ հետո նա մարմինը դուրս հանեց ջրից, իսկ պոչը սկսեց քարշ տալ ջրի մեջ:

- Հասկացա՞ր, բե ինչ է անում, - նորից հարցրեց Արշակը:

- Ի՞նչ:

- Պոչի վրա հավաքված միջատները ջրին է տալիս:

Իր քավամազ պոչը ջրում մաքրելուց հետո աղվեսը դուրս եկավ գետից՝ իրեն անհանգստանող միջատներից ազատված, և մտավ Գեղանուշ գյուղի դաշտը: Երբ հրացանս մեկնեցի նրա կողմը, անվանի որսորդը բռնեց իմ քեից:

- Ծկրակե՞ս, զնում է դաշտերը մկներից մաքրելու:

Ղափան - այժմ՝ Ղափան, քաղաք՝ Հայաստանում

նշանավոր - հայտնի, բոլորին ծանոր, անվանի

ախտահանել - մաքրել

Փորձի՛ր բացատրել.

Ժամանակ անցկացմել _____

Ճեղքով նշան տալ _____

ականջ դմել _____

Լրացրո՞ւ.

Խուստովի լեռան _____ ու _____ փեշեր

_____ որսորդ Արշակ

Հասկանո՞ւմ ես, թե _____

Իր _____ պոչը օրում մաքրեց

Այս պատմվածքում աղվեսը ինչպիսի՞ն էր. ընդգծի՛ր ճիշտ պատահանները.

- | | |
|-----------|-------------|
| ա) զգույշ | դ) խորամանկ |
| բ) վախկու | ե) կատաղած |

Պատմվածքից դո՞ւրս գրիր կարծիքը հաստատող տողերը:

Պատմիք՝ աղվեսմ իմշապես էր ախտահանում իրեմ:

Ականջիդ օ՞ղ արա.

Օձի կծածը պարանից էլ է վախենում:

Գիտուն աղվեսը զույգ ոտքով է բակարդն ընկնում:

Այնպես մտնի՝ չիմանաս, այնպես ելնի՝ զարմանաս:

Աղվեսի վկան իր պոչն է:

Ինք պատմություն հորինիք, որ այսպես ավարտվի՝

Գիտուն աղվեսը զույգ ոտքով է բակարդն ընկնում:

ՎԱԳՐԻ ՎՐԱ ՄՌԵՋԱՑՈՂ

ՏՂԱՅ

Հայո Դ.Քիսերի

Հնդկաստանում Սաղի անունվ մի տղա կար: Նա սիրում էր վագրերի վրա մոնշալ:

- Զգո՞յշ,- ասում էր մայրը,- վագրերը չեն սիրում, որ իրենց վրա մոնշում են:

Բայց ո՞ւմ ես ասում, մի ականջով մտնում էր, մյուսով դուրս գալիս: Մի օր էլ, երբ մայրը խանուք էր գնացել, Սաղին դուրս եկավ ու գնաց վագր գտնելու, որ վրան մոնշա:

Երկար չփնտրեց: Վագրն էլ ծառի ետևում Սաղիին էր սպասում. հենց Սաղին մոտեցավ, նա դուրս բռավ ու մոնշաց.

- Ոռոռոք ո...:

Սաղին էլ մոնշաց.

- Ոռոռոք ո...:

«Սա ինձ ինչի՞ տեղ է դրել,- նեղացած մտածեց Վագրը,- կատվի՞, նապաստակի՞, սկյուռի՞: Հը՞, ոնց որ «սկյուռ» են ասում, հա՞»:

Մյուս օրն էլ վագրը Սաղիին տեսավ թե չէ, ծառի ետևից դուրս բռավ և առաջվանից բարձր մոնշաց.

- Ոռոռոք ո...:

- Հա՞ վագր, ողջո՞յն,- ասաց Սաղին ու թիրափացրեց վագրի ուսին:

Վագրը չէր սիրում, որ իր ուսին թիրափացնում էին: Այդ պատճառով էլ բարկացած հեռացավ: Նա ճանկերն էր սրում, պոչը գետնին խփում, փորձում էր ավելի զարհութելի մոնշալ:

- Այս ես Վագր եմ,- կրկնում էր նա,- Վագր, Վագռոք ո... Հետո գնաց գետից ջուր խմելու: Խմեց, կշտացավ ու նայեց ջրին: Գետի միջից մի գեղեցիկ վագր էր նայում դեղին, սև շերտերով, երկար պոչով: Նա նորից մոնշաց ու այնքան բարձր, որ ինքն էլ սարսափած փախավ: Վագեց, վագեց ու հոգնեց:

«Ումի՞ց եմ փախչում,- մտածեց նա,- չէ՞ որ մոնշացողը ես իի: Չէ՞, այդ տղայի պատճառով խելք լրիվ քոցրել եմ: Օեմ հասկանում՝ ինչո՞ւ է նա վագրերի վրա մոնշում»:

Մյուս օրը, երբ Սաղին անցնում էր իր կողքով, վագրը կանգնեցրեց նրան:

- Ինչո՞ւ ես մոնշում վագրերի վրա:

- Այս նրանցից վախենում եմ, է՞,- ասաց Սաղին,- իսկ երբ ես եմ նրանց վրա մոնշում, կարծես հակառակն է ստացվում:

- Հա՞,- զարմացավ վագրը:

- Վագրերը աշխարհի ամենասարսափելի կենդանիներն են,- շարունակեց Սաղին,- միայն բացերը չեն վախենում նրանց վրա մոնշալ:

Վագրին դա շատ դուր եկավ:

- Կոկորդիլոսից էլ են սարսափելի,- հարցրեց նա:

- Հա՞ բա ի՞նչ,- պատասխանեց Սաղին:

- Առյուծներից էլ:


- Ըի՞:

Վագրը հաճույքից մոլտաց: Տղան նրան արդեն դուր էր գալիս:

- Բայց դու շատ լավ տղա ես, հա՞,- ասաց վագրը ու լիզեց Սաղիին:

Այդ օրվանից նրանք հաճախ էին միասին բափառում ու մոնշում իրար վրա:

զարհութելի - սարսափելի



Չո կարծիքով ի՞նչ է մշանակում.

մի ականջով մտնում է, մյուսով՝ դուրս գալիս _____

սա ինձ ինչի՞ւ տեղ է դրել _____

Խելքը բոցնել _____

Ինչո՞ւ էր Սադիմ մոնչում վագրերի վրա:

Դո՞ւրս գրիր այն հատվածը, որ պատմում է վագրի կատաղության մասին:

Վագրի անունից պատմի՛ր «Վագրի վրա մոնչացող տղան»:

Պատմի՛ր վազրի մասին:

Վազրը հաճույքից մոլտաց: Ինչո՞ւ:

Հերիարի ո՞ր հատվածն է Սաղիին բնութագրում, դո՞ւրս գրիր այդ հատվածը:

Ինչպիսի՞ տղա էր Սաղին:

Քո կարծիքով՝ ամեն անգամ վազրին հանդիպելիս Սաղին ի՞նչ է մտածում:

*Եթե Սաղին և վագրը միասին ապրեին, իրենց տան ցուցանակին
ի՞նչ կգրեին:*

Վագրերի մասին ի՞նչ կարող ես պատմել:

Ի՞նքդ պատմություն հորինիր.

Ժպտացող վագրը

Գիտե՞ս, որ...

Վագրերը զիշատիչ կենդանիներ են: Նրանք ապրում են անտառներում, ջունգլիներում: Սնվում են վայրի խողերի, եղնիկների, ընտանի կենդանիների մսով: Որսի են դուրս գալիս երեկոյան կամ առավոտյան մութուլուսին:

Ապրում են մենակ, զույգ են կազմում միայն ձագ ունենալուց առաջ: Ձագ են ունենում երեք տարին մեկ:

Վագրերը ապրում են 20-25 տարի:

Վագրը ամուր, մկանուտ մարմին ունի, սուր ճանկերով մեծ քաքեր ու հսկա ժանիքներ:

ԽԵԼՈՅՆ ՈՒ ՇԻՄԱՐԸ

Հ.Թումանյան

Երկու ախաղեր են լինում. մինք՝ խելոք, մյուսը՝ հիմար. Խելոք ախաղերը միշտ բանեցնում ու չարչարում է հիմարին: Ենքան չարչարում է, որ հիմարը հուսահատվում է, մի օր էլ կանգնում է, թե՝

- Ախաղեր, էլ չեմ ուզում քեզ հետ կենամ, բաժանվում եմ. իմ բաժինը տուր, զնամ ջոկ ապրեմ:

- Լա՛վ, - ասում է խելոքը, - ևսօր էլ դու ապրանքը ջուրը տար, ես կերք տամ. Երբ ջրից բերես, ո՞ր ապրանքը գոմը մտնի՝ ինձ, որը դուրսը մնա՝ քեզ:

Ժամանակն էլ լինում է ձմեռ:

Հիմարը համաձայնում է: Ապրանքը ջուրն է տանում, ետ բերում: Զմեռվա ցուրտ օ՛ր, մրսած անասուններ, հենց տաք գոմի դուռն են հասնում քեզն, իրաք ետևից ներս են բափկում: Դունքը մնում է մի հիվանդ քոստ մոզի՝ գերաններին քոր անելիս: Էն է մնում հիմարին:

Ես հիմարը բոկը վիզն է կապում, իր մոզին տանում ծախելու:

- Ա՛ մոզի, արի, հե՛յ, - կանչելով գնում է:

Սի հին ավերակի մոտից անցնելիս էլ որ ձեն է տալի՝ ա՛ մոզի, արի, հե՛յ... - ավերակը արձագանքը կրկնում է.

- Հե՛յ:

Հիմարը կանգնում է:

- Ինձ հետ ես խոսո՞ւմ, հա՞...

Ավերակը ձայն է տալիս.

- Հա՞...

- Մոզին ուզո՞՞մ ես:

- Ե՞ս...

- Քանի՞ մանեք կտաս:

- Տա՞ս...

- Հիմի կտա՞ս, քեզն:

- Չե՞...

- Դե էգուց կզամ, որտեղից որ է՝ ճարի՞:

- Արի՞...

Հիմարը համաձայնում է ու մոզին ծախված համարելով ավերակի դռանը կապում է, շվշացնելով վերադառնում տուն:

Մյուս օրը առավոտը վաղ վեր է կենում զնում փողերն առնելու: Դու մի ասիլ՝ զիշերը զայլերը մոզին կերել են: Գնում է տեսնում՝ ոսկորները դես ու դեն ցրված ավերակի առջև:

- Հը՞,- ասում է, - մորքել ես կերել, հա՞:

- Հա՞...

- Չադ է՞ր, քեզն:

- Չե՞:

Հիմարը էտեղ վախենում է, կարծում է ավերակի մտքումը կա, որ իր փողը չտա:

- Էդ իմ բանը չի՞,- ասում է, - առել ես պրծել, ես իմ փողի տերն եմ, քեր իմ փողը՝ տասը մանեք դեղին ոսկի՞...

- Ակի՞...



Ես էլ որ լսում է հիմարը, բարկանում է, ձեռի վետը ետ է տաճում, առոր թե կտաս, ավերակի խարխուլ պատերին: Մին, երկու զարկում է, պատերից մի քանի քար են վեր ընկնում: Դումի ասիլ՝ հնուց էղ պատում զանձ է եղել պահած: Քարերը որ վեր են ընկնում՝ ոսկին քափում է հանկարծ առաջը լցուում:

- Այ էղպե՞ս... քայց էսքանն ի՞նչ եմ անում, տասը մաներ ես պարտ: Իմ տասը մաները տուր, մնացածը քու փողն է, ընչի՞ս է պետք...

Մի ոսկի է վերցնում, գալի տուն:

- Հը՞, մողիդ ծախեցի՞ր,- ծիծաղելով հարցնում է խելոք ախալերը:

- Ծախեցի:

- Ո՞ւմ վրա:

- Ավերակի վրա:

- Հետո՞ւ, փող տվա՞վ:

- Իհարկե՞ տվավ: Դեռ չեր ուզում տա, ամա ձեռիս վետովը որ մի քանի հասցրի, ինչ ուներ առաջիս փունց: Իմ տասը մաները վեր կալա, մնացածն իրենն էր, իենց քողեցի ենպես փոված: Ասում է, ու ոսկին համում ցույց տալիս:

- Էղ որտե՞ղ է, - աշքերը չորս է անում խելոք ախալերը:

- Է՞հ, ցույց չեմ տալ, դու աշքածակ ես, էնքան կհավաքես, շալակս կտաս, որ մեջքս կկոտրի:

Խելոքը երդվում է, որ մենակ ինքը կշալակի, միայն թե տեղը ցույց տա:

- Բեր, - ասում է, - ձեռինդ էլ ինձ տուր, մնացածի տեղն էլ ցույց տուր, որ ես տեսնեմ, տկլոր ես, թեզ համար նոր շորեր առնեմ:

Հիմարը նոր շորերի անունը որ լսում է՝ ձեռինն էլ է տալիս ախալորը, տաճում է մնացածի տեղն էլ ցույց տալի: Խելոքը ոսկին հավաքում է, թերում տուն, հարստանում, քայց ախալոր համար նոր շորեր չի առնում:

Ես հիմարը ասում է, ասում է, որ տեսնում է չի լինում, զնում է դատավորի մոտ զանգատ:

- Պարո՞ն դատավոր, - ասում է, - ես մի մողի ունեի, տարա ավերակի վրա ծախեցի...

- Հերի՞ք է, հերի՞ք, - ընդհատում է դատավորը, - Ես հիմարը ո՞րտեղից եկավ, ո՞նց թե մողին ավերակի վրա ծախեցի... - Վրեն ծիծաղում է ու դուրս անում:

Գնում է ուրիշներին զանգատվում, նրանք էլ են վրեն ծիծաղում:

Ու ասում են, մինչև էսօր էլ խեղճ հիմարը կիսամերկ ման է զալի, պատահողին զանգատվում, քայց ոչ ոք չի հավատում, ամենքն էլ ծիծաղում են վրեն, իսկ խելոք ախալերն էլ ծիծաղում է ամենքի հետ:

քանեցնել	- աշխատեցնել, շահագործել, օգտագործել
զոկ	- առանձին, քաժան
ապրանք	- այստեղ՝ ընտանի ամասուն
քոկ	- պարան
ավերակ	- կիսաքանդ շինուրյուն
խարխուլ	- ոչ ամուր, քանդվաղ
աշքածակ	- անկուշա, ազահ, գծուծ, ձեռնիսկակ, ժրաս
զանգատվել	- բողոքել, դժգոհել

Հնդգծված բառերի և բառակապակցությունների կողքին փակագծերում դրանց խմաստով մոտ բառեր գրի՛ր:

Նմուշ՝ Խելոք Եղբայրը միշտ աշխատեցնում է (բանեցնում է) հիմարին:

Փոքր Եղբայրը զնաց զոկ () ապրելու:

Սոզին մի՞ուկով վաճառեց մի կիսաքանդ շինության ():

Մի հին ավերակի մոտից անցնելիս ձեն է տալիս () աշողի, արի՛, հե՛յ...

Գծուծ () Եղբայրը ուսկին խլեց հիմարի ձեռքից:

Հստ վերնագրերի համառոտ պատմի՛ր.

Երկու Եղբայր

Բաժանում

Չարմանալի առևտուր

Հիմարը դարձյալ խարվում է

Պատմի՛ր մեծ եղբոր մասին:

Այնպես պատմի՛ր մեծ եղբոր մասին, որ չմեղադրենք նրան:

Պատմի՛ր փոքր եղբոր մասին:

Կարծիքի հաստատի՛ր հերիաքի որևէ հատվածով:

Փոքր եղբոր անունից դիմի՛ր մեծ եղբորը:

Խորհուրդ տուր մեծ եղբորը:

ԲԱՐԵԿԵՆՊԱՍԸ

Հ.Թումանյան

Ժամանակով մի մարդ ու մի կնիկ են լինում:

Ես մարդ ու կնիկը իրար հավանելիս չեն լինում:

Մարդը կնկան է ասում հիմար, կնիկը՝ մարդուն, ու միշտ կռվելիս են լինում:

Մի օր էլ մարդը մի քանի փուր եղ ու բրինձ է առնում, տալիս մշակի շալակը, տանում տուն: Կնիկը քարկանում է.

- Ա՞յ, որ ասում եմ հիմար ես, չես հավատում, էսքան եղն ու բրինձը միանգամից ինչի՞ համար ես առել քերել. հորդ քելե՞լսն ես տալիս, թե՞ տղիդ հարսանիքն ես անում:

- Ի՞նչ քելելս, ի՞նչ հարսանիք, այ կնիկ, ի՞նչ ես խոսում, տար պահի, քարեկենդանի համար է:

Կնիկը հանգստանում է, տանում է պահում:

Անց է կենում միառժամանակ, ես կնիկը սպասում է, սպասում է՝ քարեկենդանը զալիս չի: Մի օր էլ շեմքումը նստած է լինում, տեսնում է մի մարդ վասպ-վոազ փողոցով անց է կենում: Զեռը դնում է ճակատին ու ձեռ տալի:

- Ախպե՛ր, ախպե՛ր, հալա մի կանգնի:

Տղեն կանգնում է:

- Ախպե՛ր, քարեկենդանը դու հո չե՞ս:

Անցվորականը նկատում է, որ ես կնկա ծալը պակաս է, ասում է՝ հա՛ ասեմ, տեսնեմ ինչ է դուրս զալի:

- Հա՛, ես եմ քարեկենդանը, քույրիկ ջան, ի՞նչ ես ասում:

- Են եմ ասում, որ մենք քո ծառան հո չենք, որ քո եղն ու բրինձը պահենք: Ինչ որ պահեցինք, հերքիք չե՞ր... Չես ամաչո՞ւմ... Ընչի՞ չես զալի քո ապրանքը տանում...

- Դե էլ ի՞նչ ես նեղանում, քույրիկ ջան, ես էլ հենց դրա համար եմ եկել, ձեր տունն էի ման զալիս, չէի գտնում:

- Դե արի տա՛ր:

Ես մարդը ներս է մտնում, սրանց եղն ու բրինձը-շալակում ու կրունկը դեսն է անում, երևը դեպի իրենց գյուղը:

Մարդը զալիս է տուն, կնիկն ասում է.

- Հա՛, են քարեկենդանն եկավ, իր քաները իրեն սկցրի տարավ:

- Ի՞նչ քարեկենդան... Ի՞նչ քաներ...

- Ա՞յ էն եղն ու բրինձը... Մին էլ տեսնեմ՝ վերկից զալիս է, մեր տունն էք ման զալի, կանչեցի, մի լավ էլ խայտառակ արի, շալակը տվի, տարավ:

- Վա՛յ քու անխելք տունը քանդվի, որ ասում եմ հիմար ես - հիմար ես էլի՛... Ո՞ր կողմը զնաց:

- Ա՞յ էն կողմը:

Ես մարդը ձի է նստում, ընկնում քարեկենդանի ետևից: Շանապարհին քարեկենդանը ետ է մտիկ անում, տեսնում է՝ մի ձիավոր քշած զալիս է: Գլսի է ընկնում, որ սա էն կնկա մարդը պետք է լինի:

Գալիս է հասնում իրեն:

- Քարի օր, ախպերացու:

- Աստծու քարին:

- Հո ես ճամփովը մարդ չի անց կացավ:

- Անց կացավ:

- Ի՞նչ ուներ շալակին:

- Եղ ու բրինձ:

- Հա, իենց էդ եմ ասում: Ի՞նչքան ժամանակ կլինի:
- Բավականին ժամանակ կլինի:
- Որ ձին քշեմ, կհասնե՞մ:
- Ո՞րտեղից կհասնես, դու ձիով, նա ոտով: Մինչև քու ձին չորս ոտք կփռխի՝ մի՞ն, երկո՞ւ, երե՞ք, չո՞րս, նա երկու ոտով՝ մե՞կ-երկո՞ւ, մե՞կ-երկո՞ւ, մե՞կ-երկո՞ւ, շուտ-շուտ կզնա, անց կկե-նա:

- Բա ի՞նչպես անեմ:
- Ինչպես պետք է անես. ուզում ես, ձիդ քող ինձ մոտ, դու էլ նրա պես ոտով վազի, զուցի հասնես:

- Հա՞յ, եդ լավ ես ասում:
- Վեր է գալիս, ձին բողնում սրա մոտ ու ոտով ճանապարհ ընկնում: Սա հեռանում է քե չէ, բարեկենդանը շալակը բարձում է ձիուն, ճամփեն ծոռում, քշում:

Ես մարդը ոտով զնում է, զնում է, տեսնում է շիասավ, ետ է դառնում: Ետ է դառնում, տեսնում՝ ձին էլ չկա: Գայիս է տուն: Նորից սկսում են կովել, մարդը՝ եղ ու բրնձի համար, կնիկը՝ ձիու:

Մինչև օրս էլ էս մարդ ու կնիկը կովում են դեռ: Սա նրան է ասում հիմար, նա՛ սրան, բարեկենդանը լսում է ու ծիծաղում:

**փոք - շափի միավոր = 16 կգ
մշակ - ծառա**



Ինչպե՞ս են այս նախադասությունները հեքիաթում:

Չեղքը դնում է ճակատին ու կանչում:

Անցվորականը նկատում է, որ այս կինը իիմար է:

Ինչպե՞ս էին ապրում այս հեքիաթի մարդ ու կինը. ճիշտ պատասխան ընդգծի՛ր.

ա. Հաշտ ու համերաշխ էին ապրում:

բ. Նրանք մեկ-մեկ կռվում էին:

գ. Միշտ կռվում էին:

Հեքիաթից դուքս զրիր պատասխանդ հաստատող հատվածը:

Ինչպիսի՞ն էր այս հեքիաթի կինը. ճիշտ պատասխանն ընդգծի՛ր.

ա. Խելոք էր:

բ. Հիմար էր:

գ. Աշխատասեր կին էր:

Հեքիաթից դուքս զրիր քո կարծիքը հաստատող տողերը:

Հստ վերնագրերի համառոտ պատմիք «Քարեկենդանը».

Մարդու կին

Նախապատրաստություն քարեկենդանին

Դարձյալ կոիվ

Անցվորի խորամանկությունը

Անվերջ կոիվներ

Շարունակիք.

Իմ կարծիքով անցվորականը _____

Ես կարծում եմ, որ «Քարեկենդանը» հերիաքք _____

**«Լուրեր» հեռուստատեսային ծրագրով «Քարեկենդանի» դեպքերի
մասին ի՞նչ կհաղորդեմ:**

Այսուհետեւ մարդու այլականությունները

Գիտե՞ս, որ...

Քարեկենդան նշանակում է բարի կենդանություն, ուրախություն, առատ կերակուր-
ներ վայելելու օր:

Քարեկենդանը հայկական հին տոններից է: Այն տևել է մոտ մեկ շաբաթ: Այդ շաբաթ-
վա ընթացքում ծոխ սեղաններ են զցել, գրոսանքներ ու դիմակախաղներ են կազմակեր-
պել, երգել, պարել, զվարճացել են:

Այդ տոնին նախօրոք պատրաստվել են բոլորը՝ թե՝ աղքատ, թե՝ հարուստ:

Քարեկենդանը չար ուժերին քշելու և զարունք դիմավորելու տոն է եղել:

Պատրաստություն գրառություն

Գլուխություն

ԱՆԲԱՏ ՇՈՒՌԻՒՄ

ՀԹՈՒՄԱՆՅԱԾ

Լինում է, չի լինում մի կճիկ: Ես կճիկը մի աղջիկ է ունենում՝ անունը Հուրի: Սի ծոյլ, անշնորհք աղջիկ: Օքք մինչև իրիկուն պարապ-սարապ նստած:

Բանն ինչ կանեմ՝ կեղտոտ է,

Բամբակը կորիզոտ է:

Մաստակ պիտի, որ ծամեմ,

Կտերը տիտիկ անեմ,

Անցնողին մտիկ անեմ.

Ուտեմ, խմեմ,

Սրնի, քնեմ:

Հարկաները անունը դնում են Անբան Հուրի: Ինչ մերն է՝ աղջկանը գովելով ման է զալի. ողը զզող, լիդը մասող, համ խճճող, համ խճուճը հանող, ձևող-կարող, հունցու-թխող, եփող-ափող, մի խոսրով՝ հուրի-հրեղեն, մատները ոսկի:

Ես գովասանը զնում մի երիտասարդ վաճառականի ականջն է ընկնում: Էս երիտասարդ աճառականն ասում է՝ իմ ուզածն էլ հենց սա է, որ կա: Գլխապատառ գալիս է Անբան Հուրիին



Բացատրի՛ր տրված դարձվածները.

Ճայնը գլուխը զցել _____

աչքովն ընկնել _____

ականջն ընկնել _____

մատները ոսկի _____

բանն ինչպես է պատահել _____

ձեռք բանի չտալ _____

գաղտնիքը բացվել _____

օրը մինչև իրիկուն _____

Նկարագրի՛ր Անրան Հուռուն:

Ի՞նչ կպատմես վաճառականի մասին

Պատմի՛ր զորանչի մասին:

Վերնագրիք հատվածները.

Մի կի՞ մի աղջիկ է ունենում: Ծովոթյան ու անշնորհության պատճառվ նրան Անրան Հունի իին ասում: Բայց մայրը նրան զովելով ման էր զայխ:

Սոր զովասանքը մի վաճառականի ականջն է բնկնում: Գլխապատճ զայխ է Հունին ուզում է, հետք պակվում:

Մի օր էլ տաս-քան բեռ բամբակ է բերում, որ Անրան Հունին մանի, ինքը զնում է օտար երկիր:

Հստ վերնագրերի համառոտ պատմիք.

Անրան Հունին և զորտերը

Հուռու մոր խորամանկությունը

Գորտերի անունից պատմի՛ր հերիաքի՝ իրենց վերաբերող հատվածը.

Մի օր գետում մեզ համար կոկոռում էինք:

- Փեփե՞լ... Կեկե՞լ... Փեփե՞լ... Կեկե՞լ...

Մին էլ լսեմք՝ մի կին ճայն է տալիս. _____

ԾԻՇԵՌԱԱԿԻՒ

Ա.ԽԱՂՈՅԱԲ

Դու կապուտակ ծովով արի,
Թերե, թերե թեռվ արի.
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան երգով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, գարուն դու թեր:

Սևիկ-մեխկ աշխկ ունես,
Սկրատաձև պոչիկ ունես,
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, գարուն դու թեր:

Ծիծեռնակով գարուն կզա,
Անծիծեռնակ զարուն չկա,
Ծովի փրփուր լանջով արի,
Գարնան շնչով, կանչով արի:

Արի՛, արի՛, սիրուն ծիծեռ,
Արի՛, արի՛, գարուն դու թեր:



Նկարագրի՛ր ծիծեռնակի գալը:

Նկարագրի՛ր ծիծեռնակին ըստ բանաստեղծության:

Ինչպե՞ս կրացատրես.

Դու կապուտակ ծովով արի:

Գարճաճ շմչով, կամչով արի:

Բանաստեղծությունից դո՞ւքս զրիր կրկնվող տողերը:

Գարուն բերող ծիծեռնակը

Տարի առաջ մայիս
Եղանակի վերաբերյալ
Առաջ առ առ կատար առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

Առ առ առ առ առ առ
Առ առ առ առ առ առ

ԳԱՐՍԱՄԱՍՈՒՏ

(հատված)
Հ. Մահյան

Նշենիներն արքնացել,
Իրար զլսով են անում
Եվ իրճվում են, որ իրենք
Առաջինն են արքնանում:
Չնծաղիկն է ծփծաղում
Լացակումած մի բմբից,
Կարմիր զլսիկն է հանում
Դաղձը խոնազ իր ճմբից:
Յանկապատի մի ճեղքից
Եղինջն իր աչքն է քանում,
Ծիլը թերև ժպիտով
Ծանր հասկ է խոստանում:
Ծանոր խոսքեր է ասում
Լեզուն բացված մի առու,
Եվ առուները բոլոր
Զայն են տալիս իրարու:

գարնանամուտ - գարնան սկիզբը

իրճվել - ուրախանալ, զվարճանալ, իխանալ

լացակումած - արտասվալից, արտասվածոր

ճումք - կոշտ հողի վորրիկ կտոր, հողակոշտ

Նկարիքը բանաստեղծության որևէ բառատող:

Դուքս գրիր քեզ դուք եկած հատվածները:

Բանաստեղծության մեջ ինչպիսի՞ն են քումբը, դաղձը, առուն, ժպիտը, հասկը.

բումբ *ժպիտ*
դաղձ *հասկ*

Նկարագրի՛ր զարնան զայր բատ բանաստեղծության:

Քնչպե՞ս ես հասկանում.

Ծանոթ խոսքեր է ասում

Լեզում բացված մի առու:

Զնծաղիկն է ծիծաղում

Լացակումած մի բմբից:

Շարունակի՛ր.

Երբ զարունը զալիս է,

Երբ ծառերը ծաղկում են,

Երբ արեր ժպտում է,

ԾԱՐՈՒՆԱԿԻՐ

«Կաչաղակ» լրատվական կենտրոնը հաղորդում է զարնանային լուրեր

Այսօր Տիգրանի այգում պայթեց առաջին բողոքը, շուտով ծառերը կծաղկեն:


ՏԵՐՍ ՈՒ ԾԱՌԱԾ

(1-ին մաս)

Հ.Թումանյան

Աստված քարի տա ծեզ էլ, երկու ախապորն էլ: Լինում են, չեն լինում երկու աղքատ ախապեր և լինում: Մածում են ինչ անեն, ոնց անեն, որ իրենց տունը պահեն: Վճռում են՝ փոքրը տար մնա, մեծը զնա մի ունեարի մոտ ծառա մտնի, ոռջիկ ստանա, դրկի տուն:

Էսպիս էլ մեծը վեր է կենում զնում, մի հարուստի մոտ ծառա մտնում:



Ժամանակ նշանակում են մինչև մին էլ կկվի ձեն ածելը: Ես հարուստը մի շսված պայման է դնում ծառային: Ասում է՝ «Մինչև են ժամանակը թե դու քարկանաս, դու հազար մաների տուգանք տաս ինձ, թե ես քարկանամ՝ ես տամ»:

- Ես որ հազար մաներ չունեմ, որտեղից տամ,- ասում է ծառան:
- Բան չկա, փոխարենը ինձ տասը տարի ճրի կծառայես:

Տղեն մին վախենում է ես տարօրինակ պայմանից, մին էլ մտածում է, թե ինչ պետք է պատահի: Ինչ ուզում են անեն, ես եմ ու չեմ քարկանալ, պրծանք զնաց: Իսկ թե իրենք կրարկանան, բող իրենք էլ տուժեն իրենց դրած պայմանով:

Ասում է՝ լավ, համաձայնում է:

Պայմանը կապում են ու մտնում ծառայուրյան:

Մյուս օրը Վաղ տերը վեր է կացնում ծառային որեւում և արուր հնձելու:

- Գնա՛,- ասում է,- բանի լուս-լուս է՝ ինձի, որ մուրն ընկնի՝ կզար:

Ծառան գնում է, ամբողջ օրը հնձում, իրիկունը հոգեւած զալիս է տուն: Տերը հարցնում է.

- Եղ ո՞ւր եկար:

- Դե արեք մեր մտավ, ես ել եկա:

- Չէ՛, էղան չի: Ես քեզ ասել եմ՝ քանի լուս է, պետք է հնձես: Արեք մեր մտավ, բայց տես, ճրա ախպեր լուսնյակը դուրս եկավ: Սա ի՞նչ պակաս է լուս տալի...

- Եղ ո՞նց կլինի... - զարմանում է ծառան:

- Հը՞՝, դու արդեն քարկանո՞ւմ ես,- հարցնում է տերը:

- Չէ՛, չեմ քարկանում... ես միայն ասում էի՝ հոգնած եմ... Մի քիչ հանգստանամ... - կմկնում է վախեցած ծառան ու գնում է նորից հնձելու:

Հնձում է, հնձում, մինչև լուսնյակը մեր է մտնում: Բայց լուսնյակը մեր է մտնում թե չէ, դարձյալ արեգակն է դուրս զալի: Ծառան ուժասպառ արտում վեր է ընկնում:

- Վա՛յ, քու արտն էլ հարամ ըլի, քու հացն էլ, քու տված ոռծիկն էլ... - սկսում է հայիոյել հուսահատված:

- Հը՞՝, դու քարկանո՞ւմ ես,- կանգնում է գլխին հարուստը: Երբ որ քարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով ստիպում է ծառան կամ հազար մաներ տուգանք տա, կամ տասը տարի ճրի ծառայի:

Ծառան մնում է կրակի մեջ: Հազար մաներ չուներ, թե տար հոգին ազատ աներ, տասը տարի էլ ես տեսակ մարդու ծառայելն անկարելի քան էր: Միտք է անում, միտք, վերջը հազար մաների պարտամուրիակ է տալիս հարուստին, դառն ու դատարկ վերադառնում տուն:

- Հը՛, ի՞նչ արիր,- հարցնում է փոքր ախպերը: Ու մեծ ախպերը նատում է, գլուխն էկածը պատմում, ինչպես որ պատահել էր:

- Բան չկա,- ասում է փոքրը,- դարդ մի անի. դու տանը կաց, իիմի էլ ես գնամ:

Վեր է կենում իիմի էլ փոքր ախպերն է գնում ծառա մտնում էլ նույն հարուստի մոտ:

Հարուստը դարձյալ ժամանակը որոշում է մինչև գարնան կկվի ձեն ածելը, ու պայման է դնում, որ եքն ծառան քարկանա, հազար մաներ տուգանք տա կամ տասը տարի ճրի ծառայի, թե ինը քարկանա, հազար մաներ տա ու էն օրից էլ ծառան ազատ է:

- Չէ՛, եղ քիչ է,- հակառակում է տղեն: - Թե դու քարկանաս, դու ինձ երկու հազար մաներ տաս, թե ես քարկանամ, ես քեզ երկու հազար մաներ տամ կամ քանի տարի ճրի ծառայեմ:

- Լա՛վ,- ուրախանում է հարուստը: Պայմանը կապում են, ու այժմ էլ փոքր ախպերն է մտնում ծառայուրյան:

Փորձի՛ր բացատրել.

- պայման կապել - _____
ձեռ ածել - _____
մութա ըմկնել - _____
կրակի մեջ մնալ - _____
հոգին ազատ անել - _____
դարդ անել - _____

Ինչպե՞ս կվերնագրես հերիարի 1-ին մասը:

Համառոտ պատմի՛ր մեծ եղբոր ծառայոթյան մասին:

Պատմի՛ր երկու եղբայրների մասին:

Ո՞ր հերիարի ո՞ր հերոսին է մնան մեծ եղբայրը: Ինչո՞ւ ես այդպես կարծում:

Մեղադրիք հարուստին:

Փորձի՛ր արդարացնել հարուստին:

Խորհուրդ տուր մեծ եղբարք:

ՏԵՐԾ ՈՒ ԾԱՌԱՅ


(2-րդ մաս)

Առավոտը լուսանում է, ևս ծառան վեր չի կենում տեղիցը: Տերը դուրս է գնում, տում է զայի, ևս ծառան դեռ քնած է:

- Այ տղա, դե վեր կաց է՝, օրը ճաշ դառավ:
- Հը՞, բարկանո՞ւմ ես դու... - զլուխը վեր է քաշում ծառան:
- Զէ՞, չեմ բարկանում,- վայսեցած պատասխանում է տերը. միայն ասում եմ՝ պետք է արտը զնանք հնձելու:

- Հա՞՝, որ եղ ես ասում, ոչի՞նչ, կգնանք, ինչ ես վոազում:
- Վերջապես ծառան վեր է կենում, սկսում է տրեխսները հազնել: Տերը դուրս է գնում, ներս է զայի, սա դեռ տրեխսներն է հազնում:

- Այ տղա, դե շուտ արա, հազի, է...»
- Հը՞, ին չե՞ս բարկանում:
